ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝ 24.02.2026.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ

ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Է. ԱՍՐԻՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Մհեր Սուրենի Քումունցի՝ Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» ատենախոսության վերաբերյալ

Հայ բարբառագիտության մեջ մինչ օրս կատարված ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնացել են հնչյունական և քերականական (մասնավորապես՝ ձևաբանական) հարցերի վրա: Բառապաշարի համակողմանի և ստուգաբանական վերլուծությունը հաճախ մղվել է երկրորդ պլան: Այս առումով Մհեր Քումունցի սույն դոկտորական ատենախոսությունը ուշագրավ և ծանրակշիռ ներդրում է հայերենագիտության մեջ՝ իբրև մեկ ամբողջական, ընդարձակ բարբառային տարածքի բառապաշարի հանգամանալից քննություն:

Ժամանակակից լեզվաբանության մեջ բառապաշարի պատմահամեմատական քննությունը պահանջում է նորագույն և լայնախոհ մոտեցումներ: Աշխատանքի տեսական կարևորությունն ընդգծվում է նրանով, որ հեղինակը հայերենի բարբառային բառաշերտերը դիտարկում է պատմական համատեքստում՝ երբեմն հասնելով մինչև հնդեվրոպական նախալեզվի վերակազմություններ, ուշագրավ զուգահեռներ անցկացնելով հնագույն լեզուների, այդ թվում՝ խեթերենի, հին արիական և այլ լեզուների

արմատների հետ: Ստուգաբանական և բառագիտական խորքային պրպտումները թույլ են տալիս վերհանել լեզվական այնպիսի առնչություններ, որոնք գալիս են լրացնելու Հ. Աճառյանի և հայերենագիտության այլ երախտավորների թողած արժեքավոր ժառանգությունը՝ հաճախ լույս սփռելով պատահական թվացող նմանությունների կամ ծագումնաբանական մութ ու վիճահարույց հարցերի վրա:

Բացի զուտ տեսական նշանակությունից՝ սույն ուսումնասիրությունն ունի նաև գործնական մեծ արժեք: Համակարգված և բազմաշերտ այս նյութը հուսալի հենք է հայ բառարանագրության հետագա զարգացման, ինչպես նաև բուհական համակարգում հայոց լեզվի պատմությանն ու բառարանագրությանը նվիրված նոր դասընթացների, ակադեմիական ծրագրերի մշակման համար:

Միաժամանակ անհրաժեշտ է մատնանշել, որ աշխատանքի արդիականությունը դուրս է գալիս զուտ լեզվաբանական շրջանակներից և ձեռք է բերում բացառիկ հասարակական-քաղաքական և պատմական հնչեղություն: Այն խիստ արդիական է 2020թ. և նրանից հետո ծավալված ողբերգական քաղաքական իրադարձությունների համատեքստում: Արցախի տարածքում ապրող բարբառակիր մարդիկ փաստացի զրկվեցին իրենց իսկ բնօրրանում իրենց տարածքին հատուկ բարբառով միմյանց հետ հաղորդակցվելու բնական պայմանից: Նման ճգնաժամային իրողությունների պայմաններում Սյունիք-Արցախի հարուստ լեզվական ժառանգության վավերագրումը, գիտական խորքային պահպանումն ու անաղարտ փոխանցումը գալիք սերունդներին դառնում է ոչ միայն գիտական խնդիր, այլև ազգային ինքնության և պատմական հիշողության պահպանման առաջնահերթ և անհետաձգելի հրամայական:

Որպես ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ՝ հարկ եմ համարում արձանագրել, որ ամբիոնը՝ իբրև առաջատար կազմակերպություն, սույն աշխատանքը հանգամանալից քննության է ենթարկել և արժանացրել բարձր գնահատականի դեռ ամիսներ առաջ: Մեր կողմից առանձնացվել և արժևորվել են ատենախոսության արժանիքներն ու գիտական նորույթը.

1. Այս աշխատանքի կարևոր արժեքներից է բազմաշերտ մոտեցումը: Հեղինակը ոչ միայն հմտորեն փորձում է զանազանել բառապաշարի բնիկ և փոխառյալ շերտերը, այլև քննությունն իրականացնում է միանգամից մի քանի տեսանկյուններից՝ պատմական, պատմահամեմատական և համաժամանակյա: Աշխատանքում նյութը դասակարգված է ճշգրիտ թեմատիկ խմբերով (օրինակ՝ «Ֆիզիկական աշխարհ», «Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ» և այլն), ինչը թույլ է տալիս բառապաշարը դիտարկել որպես կուռ համակարգ:

2. Ատենախոսությունը աչքի է ընկնում աղբյուրագիտական խորքային հենքով: Ատենախոսը քաջատեղյակ է թեմային առնչվող հայ և օտարալեզու հիմական գիտական գրականությանը, որը գիտական մեծ բարեխղճությամբ ու քննադատաբար կիրառել է իր ուսումնասիրության մեջ:

3. Հետազոտությունը ներառում է բառաքննական և ստուգաբանական հսկայածավալ վերլուծություններ: Նրանում առանցքային տեղ են գրավում հեղինակի բառաքննական-ստուգաբանական դիտարկումները: Ինչպես հայտնի է, վերջինս բավական դժվարին և խնդրահարույց հետազոտական բնագավառ է: Անշուշտ, Մ. Քումունցի առաջարկած ստուգաբանությունները կարող են վիճահարույց լինել, նույնիսկ զերծ չլինել թերություններից: Նկատենք, սակայն, որ եթե նույնիսկ այդ բառաքննական-ստուգաբանական դիտարկումների մի մասը դիմանա ժամանակի քննությանը, դա արդեն իսկ կարևոր ու մեծայուն նպաստ կլինի հայերենագիտությանը: Դեռ ավելին. եթե անգամ ատենախոսի որոշ վարկածներ ժամանակի ընթացքում չհաստատվեն կամ մերժվեն, միևնույնն է, այդ հետազոտական պրպտումները հզոր խթան կհանդիսանան հետագա ուսումնասիրողների համար՝ նրանց մղելով նորանոր նմանօրինակ ուսումնասիրությունների:

Իրականում մի առանձին գիտական աշխատանքի նյութ կարող են լինել զուտ հեղինակի առաջարկած վերլուծությունների ստուգումը, ճշգրտումը կամ մերժումը. այնքան ծավալուն ու բազմազան են դրանք:

4. Կարծում ենք՝ կարևոր և արժեքավոր են ատենախոսության մեջ տեղ գտած վիճակագրական և համեմատական աղյուսակները: Հիմվելով համաշխարհային և հայրենական լեզվաբանության (մասնավորապես՝ Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի) լավագույն ավանդույթների վրա՝ Մ. Քումունցը Արցախ-Սյունիքի բարբառային նյութը բաշխել է 23 ճշգրիտ թեմատիկ խմբերի: Բարբառային բառապաշարի նմանատիպ քննությունը՝ ըստ գաղափարական-թեմատիկ դասակարգման սկզբունքների, մեթոդաբանական բացարձակ նորույթ է հայ բարբառագիտության մեջ: Այս աղյուսակները թե՛ պարզապես վիճակագրական տվյալներ են արձանագրում կամ ամփոփում առանձին խմբերը և թե՛ գործնականում տեսանելի են դարձնում ընդհանուր հնդեվրոպական, բնիկ հայերենյան և փոխառյալ շերտերի հարաբերակցությունը տվյալ բարբառախմբում: Դրանք գործնականում կարելի է կիրառել նաև մյուս բարբառների համար:

Որպես պաշտոնական ընդդիմախոս՝ կցանկանայի հատուկ ընդգծել այն բարեխիղճ աշխատանքը, որն ատենախոսն իրականացրել է ամբիոնի ներկայացրած կարծիքի հիման վրա հետագա բավական կարճ ժամանակահատվածում: Մ. Քումունցը ակադեմիական բարձր պատասխանատվությամբ է մոտեցել հնչած բոլոր դիտողություններին և աշխատանքի վերջնական տարբերակից վերացրել է մեր կողմից նկատված գրեթե բոլոր անճշտությունները: Մասնավորապես՝ հստակեցվել են նյութի համակարգվածությունը, եզրույթների ձևակերպումները ինչպես «Ներածության» մեջ, այնպես էլ երկրորդ գլխում: Թեմատիկ խմբերում բառերի քննությունն այժմ ներկայացված է միօրինակ և տրամաբանական դասավորությամբ:

Լիովին շտկված են վիճակագրական անճշտություններն ու աղյուսակներում առկա անհամապատասխանությունները, ինչպես նաև աշխատանքի նախորդ տարբերակում առկա ոճական անհարթությունները, կրկնություններն ու բացթողումները:

Դիտարկումներ, առաջարկություններ

Գործ ունենալով չափազանց ընդգրկուն և բարդ հետազոտության հետ՝ կցանկանայինք առանձնացնել երկու դիտարկումներ՝ որպես ուղենիշ հեղինակի հետագա գիտական գործունեության համար:

1. Թեև ատենախոսը ներկայացնում է բարբառային բառերի հսկայածավալ նյութ և դրանց շուրջ կատարված վերլուծություններ, բառաքննություն և ստուգաբանություն, այդուհանդերձ ցանկալի է, որ հետագայում հեղինակն ուշադրություն դարձնի հնչյունական և իմաստային անցումներին՝ փաստարկելով դրանք ավելի շատ զուգահեռ օրինակներով, որպեսզի դրանց օրինաչափականությունն ու համոզչականությունն առավելագույնի հասցվեն:
2. Արցախ-Սյունիքի բարբառներում պահպանված հնդեվրոպական բառերի հիման վրա շատ ավելի ծավալուն և խորքային եզրահանգումներ կարելի է անել մարդկանց կենցաղի, սովորույթների, հասարակական-քաղաքական և մշակութային տարաբնույթ հարաբերությունների մասին: Թեև ատենախոսը չափազանց զգուշությամբ է կատարում իր եզրակացությունները, այնուամենայնիվ, կարծում ենք, որ ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում առկա ընդհանրական դիտարկումները կարող են հրաշալի հիմք դառնալ առանձին ազգագրական-լեզվաբանական մենագրության համար:

Վերոշարադրյալ դիտարկումները որևէ կերպ չեն նսեմացնում կատարված աշխատանքի բարձր արժեքը: Միեր Քումունցի ատենախոսությունը հայ բարբառագիտության մեջ կարևոր ձեռքբերում է: Այն ոչ միայն լրացնում է առկա բացը, այլև առաջադիր վարկածներով ու վերլուծություններով դառնում է արժեքավոր ելակետ հետագա հետազոտությունների համար:

Եզրակացություն

Ամփոփենք՝ ընդհանուր եզրակացությունն այն է, որ Միեր Սուրենի Քումունցի «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» խորագրով դոկտորական ատենախոսությունը ավարտուն, գիտականորեն հիմնավորված և պատշաճ մակարդակով գրված աշխատանք է, իսկ առաջին պաշտպանությունից հետո

իրականացված խորքային խմբագրումը այն դարձրել է առավել ամբողջական ու գրեթե անխոցելի:

Սեղմագրում ներկայացված դրույթները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը, հանրապետական և միջազգային ամսագրերում հրատարակված հոդվածները բխում են ատենախոսության բովանդակությունից՝ արտացոլելով հեղինակի գիտատեսական ըմբռնումները:

Այսպիսով՝ «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» դոկտորական ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին ներկայացվող պահանջները, ինչը հիմք է տալիս միջնորդելու ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի՝ գիտական աստիճաններ շնորհող 019 մասնագիտական խորհրդի առջև՝ նրա հեղինակ Մհեր Սուրենի Քումունցին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը, ինչին նա միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր՝ **Աննա Հ. Աբաջյան**

Հաստատում եմ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Հ. Աբաջյանի ստորագրությունը:

ԵՊՀ գիտական քարտուղար՝ **Մ. Հովհաննիսյան**

20.02.2026 թ.